ՆԱԽԱԳԻԾ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2010 թվականի -ի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1522-Ն ՈՐՈՇՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1522-Ն որոշման ցուցանիշներում կատարել փոփոխություններ համաձայն սույն որոշման NN 1-6 հավելվածների:

Տ. Դավթյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի աղյուսակի ցուցանիշներում կատարվող փոփոխությունները

(հազար դրամներով)

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների ու դրանց տարրերի անվանումները	Ցուցանիշների փոփոխություն (գումարների ավելացումը ներկայացված է դրական նշանով)
Եկամուտների գծով	8,000,000.0
Ծախսերի գծով	8,000,000.0
Դեֆիցիտը (պակասուրդը)	-

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի աղյուսակի և ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման N 2 հավելվածի ցուցանիշներում կատարվող փոփոխությունները

(հազար դրամներով)

Պետական բյուջեի եկամուտներ	Ցուցանիշների փոփոխություն (գումարների ավելացումը ներկայացված է դրական նշանով)
	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	8,000,000.0
այդ թվում՝	
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	8,000,000.0

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի աղյուսակի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման N 3 հավելվածի ցուցանիշներում կատարվող փոփոխությունները և լրացումները

(հազար դրամներով)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ցուցանիշների փոփոխություն (ծախսերի ավելացումները բերված են դրական նշանով)
				Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	8,000,000.0
			այդ թվում՝	
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8,000,000.0
			այդ թվում՝	
	01		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	8,000,000.0
		02	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	8,000,000.0

ՀԱՎԵԼՎԱԾ N 4

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի աղյուսակի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման N 4 հավելվածի ցուցանիշներում կատարվող փոփոխությունները

(հազար դրամներով)

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ցուցանիշների փոփոխություն (ծախսերի ավելացումները բերված են դրական նշանով)
	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	8,000,000.0
այդ թվում՝	
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	8,000,000.0
այդ թվում՝	
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	8,000,000.0
այդ թվում՝	
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	8,000,000.0

ՀԱՎԵԼՎԱԾ N 5

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածում և ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24 -ի N 1522-Ն որոշման N 5 հավելվածում կատարվող փոփոխությունները

(հազար դրամներով)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխություն (ծախսերի ավելացումները բերված են դրական նշանով)
				Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	8,000,000.0
			այդ թվում՝	
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8,000,000.0
			այդ թվում՝	
	01		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	8,000,000.0
			այդ թվում՝	
		02	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	8,000,000.0
			այդ թվում՝	
			07. Ավելացված արժեքի հարկի վերադարձ	8,000,000.0
			ՀՀ ֆինանսների նախարարություն	8,000,000.0
			այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով	8,000,000.0

Փոփոխություններ ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման N 14 հավելվածի N 14.22 աղյուսակում

ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները

1. Քաղաքական միջոցառումներ

11 Ծառայություններ

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը Ավելացված արժեքի հարկի վերադարձ	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ցուցանիշների ավելացումները բերված են դրական նշանով)	
			Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Ֆինանսական ցուցանիշներ
ԸՀ008	ԱԾ01	Նկարագրություն Պետական բյուջեից վերադարձման ենթակա ԱԱՀ-ի գումարների տրամադրումը նման գերավճարներ		
Չափորոշիչներ			Տարի	Տարի
Քանակական			X	X
Որակական		Մշակված չէ	X	X
Ժամկետայնության		Ըստ պահանջի	X	X
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)			X	8,000,000.0
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը				
ԱԱՀ-ի վերադարձ				
Վերջնական արդյունքի նկարագրությունը				
Կանոնակարգել ԱԱՀ-ի գերավճարների գումարների վերադարձի գործընթացը և ուժեղացնել դրա նկատմամբ վերահսկողությունը				
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը				
ՀՀ ֆինանսների նախարարություն				

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման ցուցանիշներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման ցուցանիշներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներ իրականացնող հարկ վճարողների ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գերավճարի վերադարձման համար ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված 18 մլրդ դրամից բացի վերադարձման աշխատանքները լիովին իրականացնելու համար համապատասխան աղբյուր ստեղծելու անհրաժեշտությամբ: ԱԱՀ-ի վերադարձի ծավալների ավելացումը հիմնականում պայմանավորված է հանքարդյունահանող, վերամշակող և արտահանող ձեռնարկությունների տնտեսական գործունեության այն հանգամանքով, որ, 2010թ ութ ամիսների ձեռք բերած պղնձի, մոլիբդենի, բազմամետաղների կոնցենտրատի միջին բորսայական գները 2009թ համեմատ աճել են շուրջ 62%-ով:

Խնդրի կարգավորման նպատակով նախագծով առաջարկվում է հաշվի առնելով ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1522-Ն որոշմամբ 2010 թվականի առաջին ինն ամսվա համար հարկերի և տուրքերի գծով սահմանված մուտքերի ծրագրի նկատմամբ առկա գերակատարման մակարդակը, ինչպես նաև հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետով ՀՀ կառավարությանը տրված իրավասությունը, հարցը կարգավորել ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված եկամուտների և ծախսերի տարեկան ծրագրային ծավալների ավելացման եղանակով:

Տ ե ղ ե կ ա ն ք

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման ցուցանիշներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխության անհրաժեշտության մասին

ՀՀ կառավարության վերը նշված որոշման ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման կամ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

Տ ե ղ ե կ ա ն ք

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման ցուցանիշներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ նախատեսելու մասին

ՀՀ կառավարության վերը նշված որոշման ընդունմամբ ՀՀ 2010 պետական բյուջեի ծախսերի և եկամուտների տարեկան ծրագրային գումարները կավելանան 8.0 մլրդ. դրամով:

Ց ա ն կ

իրավական ակտերի, որոնց հիման վրա կամ որոնցից օգտվելով մշակվել «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման ցուցանիշներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը

1. «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք,
2. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք,
3. ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1522-Ն որոշում: